

**ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**

- Դիմում-հայտ
- Անձնագիր և սոցիալական ապահովության քարտ
- Հաճախորդի հետ բնակվող (խնամակալության տակ գտնվող) անձանց անձնագրերը
- Փաստացի բնակության վայրից տեղեկանք գրանցման (հաշվառման), և ընտանիքի կազմի վերաբերյալ՝ տրված իրավասու մարմնի (տեղական ինքնակառավարման մարմին, ԲՇՏ, Համատիրություն, Լիազոր ներկայացուցիչ և այլն) կողմից
- Ամուսնական կարգավիճակը հավաստող փաստաթուղթ (ամուսնության, ամուսնալուծության, ամուսնու մահվան վկայականներ) և այլն (առկայության դեպքում), երեխաների ծննդյան վկայականներ (առկայության դեպքում)
- Տեղեկանք բնակության վայրից (3-րդ ձև)
- Տեղեկատվություն (պետ. ռեզիստրից, դեպոզիտարիայից, ռեեստրավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցության վերաբերյալ:
- Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին ամսվա շրջանառության և մնացորդի վերաբերյալ
- Տեղեկանք աշխատավայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը և/կամ հայտարարություն եկամուտների վերաբերյալ (երբ Հաճախորդը և (կամ) երաշխավորը չեն աշխատում), ինչպես նաև առկայության դեպքում եկամուտների վերաբերյալ այլ փաստաթղթեր,
- Աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (բացառությամբ՝ պետական ծառայողների)
- Տեղեկություններ ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ
- Վերանորոգվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության, սեփականության իրավունքի ծագման(առուվաճառք, նվիրատվության պայմանագիր և այլն) համար հիմք հանդիսացող, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր
- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից տրված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք, (ներկայացվում է համապատասխան վարկառուի հայտը Վարկային կազմակերպության կողմից հավանություն ստանալուց հետո)
- Վերանորոգման աշխատանքների իրականացման ծախսերի նախահաշիվ
- Շինարարության նպատակով վարկ ստանալու դեպքում ներկայացնել համապատասխան շինթույլտվություն, օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագիծ և լիցենզավորված կազմակերպության կողմից հաստատված նախահաշիվ
- Այն դեպքում, երբ որպես երաշխավոր հանդես է գալիս իրավաբանական անձ, ապա իրավաբանական անձին վերաբերվող փաստաթղթերը՝ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեզիստրի գրանցման վկայական (իր ներդիրներով, ներառյալ ընկերության Տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը), ֆինանսական հաշվետվությունները և այլն:
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է վարկային կազմակերպությունը: